«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԼԾԱԿ ԱՊՐԻԼՅԱՆ ԵՎ ՀԵՏԱՊՐԻԼՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Նելլի Բաղդասարյան
Արցախի պետական համալսարան, պ.գ.թ., դոցենտ,
nelli.baghdassaryan@gmail.com

Միջազգային հարաբերություններում «զսպման» մեթոդները համաչափ են լարվածության հաղթահարմանը: Ըստ այդմ, խոսույթի մակարդակից այն հարմար քաղաքական իրողություններով պայմանավորված կամ պարտադրված սահուն կերպով կարող է տեղափոխվել կիրառական ոլորտ: Ռազմական սպառնալիքի մշտական գերակայության պայմաններում հակամարտող կողմերը ձևավորում են զսպման մեխանիզմներ, որոնք ժամանակի փորձաքննությանը ենթարկվելով ձեռք են բերում առաջնային կամ երկրորդական նշանակություն: Ադրբեջանի նկատմամբ ռազմաքաղաքական զսպում իրականացվում է թե՛ ԼՂՀ և թե՛ ՀՀ կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական գործողություններ սկսելուց: Դրա հետ մեկտեղ ՀՀ Ադրբեջանի դեմ կիրառում է զսպում՝ սեփական անվտանգության հարցում, պայմանավորված Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության հայտարարություններով՝ ռազմական հարվածներ հասցնելու Հայաստանի ողջ տարածքին: Այս դեպքում՝ հակամարտության զսպման մեխանիզմների շարքում է նաև Արցախի Հանրապետության ճանաչումը ՀՀ կողմից, որը ձեռք է բերել արտաքին քաղաքական և ռազմաքաղաքական գործառույթներ:

Արցախի միջազգային ճանաչման հարցը ռազմական դիվանագիտության և հակառակորդի զսպմանն ուղղված ռազմաքաղաքական միջոցառումների համակարգում է: Իրականում նման զսպում հայկական կողմից արդյունավետության տարբեր աստիճաններով կիրառվում է 1994 թ. մայիսից՝ անժամկետ հրադադարի հաստատումից հետո, ինչը թելադրվում է հակամարտող կողմերից մեկի՝ Ադրբեջանի ռազմական հռետորաբանության և սպառազինության մրցավազք թելադրելու քաղաքականությամբ: Փաստորեն, ռազմական հարթակում հայկական կողմին հաջողվել է հասնել առավել մեծ հաջողությունների, քան դիվանագիտական հարթակում՝ քանի որ լայնածավալ պատերազմի վերաճման գործընթացները զսպվում են սպառազինությունների մրցավազքով, հետևաբար այստեղ գործ ունենք ռազմական իրողություններից թելադրվող դիվանագիտության հետ:

ԼՂՀ ճանաչման հարցը երբևէ ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգից դուրս չի եկել: Խնդիրն օրենսդրական նախագծի մակարդակով բարձրացվել է, սակայն մերժվել՝ բանակցային գործընթացը փակուղի չտանելու և ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունը չխաթարելու պատճառով: Հատկանշական է, որ ղարաբաղյան հակամարտության ընթացքում ձևավորված և դրա պարտադրանքով գործող ռազմաքաղաքական դիվանագիտության պայմաններում ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացն իրատեսական մակարդակում քննարկելը հստակ դերակատարություն է ստանձնել ՀՀ արտաքին քաղաքական ուղղույթի կողմից՝ ռազմական գործողությունները զսպելու առումով: Այս հարցում կարևոր նշանակություն ունի ՀՀ նախագահի կողմից 2010 թ. դեկտեմբերի 2-ին Աստանայում կայացած ԵԱՀԿ գագաթաժողովի ելույթը՝[1] ՀՀ կողմից ԼՂՀ

[1] Саммит ОБСЕ 2010 в Астане, 1-2.12.2010 (/http://www.osce.org/ru/event/summit_2010)

ճանաչման խոսույթ ծավալելու և այն որպես ռազմաքաղաքական գործիք ծառայեցնելու առումով, փաստորեն, կարելի է որակել որպես արտահայտված բեկում քննարկվող խնդրում: Մասնավորապես՝ ՀՀ նախագահի կողմից հայտարարվել էր, որ Ադրբեջանի կողմից պատերազմ սանձազերծելու դեպքում Հայաստանին ոչ մի այլ բան չի մնա, քան Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը և նրա անվտանգության ապահովումը[1]: Փաստորեն, ՀՀ նախագահը միջազգային հանրությանը ցույց տվեց, որ միջազգային ճանաչման ակտին հետևող քաղաքական գործընթացներն առավել առաջնահերթ են Ղարաբաղի բնակչության անվտանգության համակարգն ամրապնդելու առումով: Այդպիսով, ճանաչման հարցը դարձավ զսպման մեխանիզմ պատերազմի կանխման և հրադադարի ռեժիմի ամրապնդման իրողությունները շոշափելի դարձնելու առումով:

ԼՂՀ ճանաչման հարցը ՀՀ կողմից որպես պատերազմի զսպման մեխանիզմ, խոսույթի տարբեր հարթակներից կրկին պաշտոնական հարթակ տեղափոխվեց 1994 թ. հրադադարի հաստատումից հետո՝ 2016 թ. ապրիլի 2-5-ը Ադրբեջանի կողմից ծավալված և աննախադեպ մակարդակով արտահայտված ռազմական գործողությունների ընթացքում: ԼՂՀ ճանաչումը ՀՀ կողմից և միջազգային իրավասուբյեկտություն հաղորդելը կլիներ ադրբեջանական ագրեսիայի գլխավոր պատասխանը: Խնդրի քննարկումը քաղաքական հարթակում հայկական դիվանագիտական դաշտում դիտվեց որպես զսպիչ լծակ «սողացող հակամարտության» մեջ:

Քաղաքական պաշտոնական խոսույթում ՀՀ նախագահը հավատարիմ մնալով նախկինում արված իր պաշտոնական հայտարարություններին՝ 2016 թ. ապրիլի 4-ին ԵԱՀԿ անդամ երկրների դեսպանների հետ հանդիպման ժամանակ հանդես եկավ հայտարարությամբ: ՀՀ նախագահի կողմից ընդգծվեց.

- Հայաստանի Հանրապետության՝ 1994 թ. Զինադադարի համաձայնագրի կողմ լինելը և դրանով պայմանավորված ԼՂՀ բնակչության անվտանգության երաշխավորի պարտականությունները:
- Ստեղծված իրավիճակում ՀՀ և ԼՂՀ միջև ռազմական փոխօգնության պայմանագիր կնքելու անհրաժեշտությունը:

ՀՀ նախագահի հատկանշել էր. «…Մեկ անգամ չէ, որ ես հայտարարել եմ, որ, եթե, իրոք, ռազմական գործողությունները շարունակվեն և ստանան լայնածավալ մասշտաբ, Հայաստանի Հանրապետությունը ճանաչելու է Լեռնային Ղարաբաղի անկախությունը»[2]: Իր ելույթում ՀՀ նախագահը մատնանշել էր ռազմական գործողությունների հետագա սաստկացման դեպքում լայնածավալ պատերազմի հավանականությունն, ինչն իր հերթին կազդի ոչ միայն հարավկովկասյան, այլև եվրոպական տարածաշրջանի անվտանգության ու կայունության վրա: Այդպիսով՝ պատերազմի զսպման ներքին լծակներից բացի ՀՀ նախագահն արտաքին պատասխանատվության ուղղությամբ թիրախավորել էր տարածաշրջանի և եվրոպական դաշտի անվտանգության պատասխանատվությունները: ՀՀ նախագահի ելույթն արտահայտում էր Ադրբեջանի պատասխանատվության չափը լարվածության աննախադեպ մակարդակում և ենթադրվող հետևանքներն ուղղված պատասխանատու կողմին.

---

[1] Գրեթե համաժամանակյա ՀՀ-ն և ՌԴ-ն 2010 թվականին երկարաձգեցին Հայաստանում ռուսական ռազմական հենակայանի մասին պայմանագիրը, իսկ Ադրբեջանը Թուրքիայի հետ պայմանագիր կնքեց ռազմավարական համագործակցության մասին:

[2] Նախագահը հանդիպում է ունեցել ԵԱՀԿ անդամ երկրների դեսպանների հետ, 04.04.2016, (http://www.president.am/hy/press-release/item/2016/04/04/President-Serzh-Sargsyan-meeting-with-Ambassadors-of-OSCE-states/):

- Ռազմական հակամարտության ծավալման դեպքում Ադրբեջանը կարող է քաղաքական կոլապսի մատնվել, եթե ՀՀ կողմից ճանաչվի Արցախի անկախությունը:
- ՀՀ կողմից ԼՂՀ ճանաչումը ենթադրում է բանակցային գործընթացի փակուղի, Մինսկի ձևաչափի վերափոխում՝ Ստեփանակերտ-Բաքու ձևաչափի, ինչը ենթադրում է անուղղակի ճանաչում նաև Ադրբեջանի կողմից:

2016 թ. ապրիլի 5-ին ռազմագործողությունները դադարեցնելու նպատակով ձեռք բերված բանավոր պայմանավորվածությունից հետո ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ՝ Զ. Փոստանջյանը և Հ. Բագրատյանը՝ առաջնորդվելով ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններով և անվտանգությանն ուղղված մարտահրավերներին դիմակայելու հրամայականով 2016 թ. ապրիլի 6-ին հանդես եկան Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման օրենսդրական նախաձեռնությամբ՝ «Արցախի Հանրապետությունը ճանաչելու մասին»: Օրինագծի հեղինակները հիմնավորում էին, որ այն Հայաստանի և Ղարաբաղի ներկայացուցիչների միջև քննարկումների արդյունք է և հիմնավորված է արտաքին գործոններով: Նախագծի հիմնավորման մեջ մասնավորապես ասվում էր. «Սույն օրենքի նախագծի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կողմից իրավամբ կճանաչվի Արցախի փաստացի կարգավիճակը՝ ելնելով նրանից, որ Արցախի Հանրապետությունը բավարարում է ինքնիշխան պետության համար միջազգային օրենքի բոլոր նախապայմաններին: Օրենքը հիմք կհանդիսանա Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների՝ Արցախի Հանրապետության պաշտոնական ճանաչումից ծագող հարաբերությունները կարգավորելու, Արցախի անվտանգությունն ապահովելու եւ ամրապնդելու գործում ՀՀ իրավունքներն ու պարտականությունները որոշակիացնելու, Հայաստանի ազգային շահն ու պետական քաղաքականությունը սահմանելու, հետհակամարտյան վերականգնման աշխատանքներին Հայաստանի մասնակցության համար[1]»: Որոշումը չընդունվեց, քաղաքական խոսույթում մերժման հիմնավորումները հետևյալն էին.

- ՀՀ կողմից ԼՂՀ ճանաչումն այս փուլում նպատակահարմար չէ /կամ ժամանակավրեպ է/:
- ՀՀ-ն «դե-ֆակտո» ճանաչել է ԼՂՀ-ն, և իրավահավասար հարաբերություններ երկու պետությունների միջև արդեն իսկ առկա են, մասնավորապես, վկայակոչվում էր երկու պետությունների միջև 100-ից ավելի պայմանագրերի առկայությունը:
- Բանակցային գործընթացը կհայտնվի փակուղում և վերջ կդրվի Մինսկի խմբի ձևաչափին:
- Ստատուս-քվոյի /հաստատված որոշակի իրադրության/ խախտման սցենարում մեղքի սեփական բաժինը ստանձնելու դերակատարություն, ինչը ենթադրում է նաև միջազգային մեկուսացում:

ՀՀ օրենսդիր մարմնի կողմից ԼՂՀ ճանաչմանն ուղղված այս նախաձեռնության մերժումից հետո ԼՂՀ ԱԺ խմբակցությունները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, ընդգծելով որ ստեղծված իրավիճակում ԼՂՀ

[1] *Պ-987-06.04.2016-ԱԺ-010/0/*
http://www.parliament.am/search.php?lang=arm&what=%D4%BC%D5%A5%D5%BC%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6+%D5%B2%D5%A1%D6%80%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B2+%D5%B3%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B9%D5%B8%D6%82%D5%B4&where=whole

իրավական ճանաչումը թույլ կտա ապահովել նրա ժողովրդի անվտանգություն ու տարածաշրջանի կայունությունը[1]:

Ապրիլյան պատերազմի պարտադրանքով ռազմաքաղաքական դիվանագիտության գործիքակազմի կիրառումը հայկական քաղաքական դաշտի կողմից անարձագանք չմնաց միջազգային հանրության կողմից: Ուսումնասիրությունը փաստում է, որ այս հարթակում ևս գիտակցվեց միջազգային ճանաչման անհրաժեշտությունը որպես զսպիչ լծակ ռազմական գործողություններում:

Միջազգային խոսույթում աննախադեպ մակարդակով այն քննարկվեց Ստրասբուրգում, Եվրախորհրդարանի 2016 թ. ապրիլի 12-ի նիստում: Ռազմական լարվածության ահագնացող աճով պայմանավորված լսումների ժամանակ իրավիճակից դուրս գալու ելքերում Ադրբեջանին ուղղված հասցեական մեղադրանքներ հնչեցին: Ելույթներով հանդես եկան ԵՄ արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին, Լյուքեմբուրգի պատգամավոր՝ Ֆրանկ Էնգելը, Չեխիան ներկայացնող պատգամավոր Յարոմիր Շտետինան, Կիպրոսի ներկայացուցիչներ Մավրիդիս Կոստասը և Էլենի Թեոխարուսը, Մեծ Բրիտանիան ներկայացնող պատգամավոր Չարլզ Թենոքը, Լեհաստանը ներկայացնող Մարեք Յուրեքը, Ռումինիան ներկայացնող Բուշոյ Քրիստիան-Սիլվիուն: Կիպրոսի ներկայացուցիչ Էլենի Թեոխարուսն իր ելույթում կոչ էր հնչեցրել՝ ուղղված ԵՄ-ին՝ պատժամիջոցներ կիրառելու Ադրբեջանի նկատմամբ՝ Ղարաբաղի բնակչության դեմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների առնչությամբ. «Եվրամիությունը պետք է աջակցի Ղարաբաղի ժողովրդին, որը պայքարում է իր ազատության համար: Մենք պետք է ճանաչենք Լեռնային Ղարաբաղը և պատժամիջոցներ կիրառենք Ադրբեջանի նկատմամբ: Դա մեզ կմոտեցնի խաղաղության հաստատմանը»: ԼՂՀ ճանաչման կոչով հանդես էր եկել նաև ԵԽ պատգամավոր Լյուքսեմբուրգի ներկայացուցիչ Ֆրանկ Էնգելը. «Միակ բանը, որ այս դեպքում պետք է տեղի ունենա, ԼՂՀ ճանաչումը կլինի»: Էնգելի խոսքերով. «Ադրբեջանն այսօր մնում է ագրեսոր, ինչպես ագրեսոր էր 24 տարի առաջ: Նա շարունակել է խախտել հրադադարն ավելի փոքր մասշտաբով և շատ երկար ժամանակով, և դա անում է, որ բոլոր հայերն այդ տարածաշրջանում պետք է անհետանան»: Էնգելը հատկանշել էր նաև Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշումը և Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանում ազգային հերոս հռչակելու փաստը: Եվրախորհրդարանի պատգամավորն իր ելույթում ընդգծել էր ԼՂՀ հռչակման օրինական հիմքերը, մասնավորապես, որ այն պայմանավորված էր ԽՍՀՄ կազմից դուրս գալու կարգով[2]:

Արցախի միջազգային ճանաչման հարցում անմասն չմնաց նաև միջազգային մամուլը, հատկանշական է, որ խնդիրը դարձյալ դիտարկվեց որպես զսպող գործոն հակամարտության լուծման հարցում: Մասնավորապես, Die Presse ավստրիական պարբերականում տպագրվեց Պատերազմի հետևանքների ուսումնասիրության ինստիտուտի գիտաշխատող Լյուդվիգ Բոլցման Քրիստոֆ Բեհեդիկտերի հոդվածը, որտեղ հեղինակը նշում էր, որ արևմտյան երկրները գործնականում ճնշման որևէ լծակ չունեն, որպեսզի հասնեն կոնֆլիկտի լուծմանը՝ հաշվի առնելով երկու կողմերի շահերը: «Խնդիրը լրջորեն ծանրանում է, քանի որ

[1] ԼՂՀ Ազգային ժողովի խմբակցությունների համատեղ հայտարարությունը, 07.04.2016 (http://www.nankr.am/hy/1595)

[2] Debates/12.04.2016 – Strasbourg/ (http://www.europarl.europa.eu/sides/getDoc.do?type=CRE&reference=20160412&secondRef=ITEM-015&format=XML&language=EN/)

լուծման փորձված մոդելները կիրառելի չեն հենց արևմտադեմոկրատական հեռանկարներից ելնելով» Բենեդիկտերը լուծման հետևյալ տարբերակն էր առաջարկում. «Չնայած Ադրբեջանի պահանջները իր կազմի մեջ մտցնելու նախկին խորհրդային ինքնավարությունը համարվում է հիմնավոր միջազգային իրավունքի տեսակետից, նույնքան օրինական է համարվում Լեռնային Ղարաբաղի ձգտումը անկախության, այն դեպքում, երբ Ադրբեջանը երբևէ չի տիրել նրան անկախության հռչակումից հետո»: Բենեդիկտերն ընդգծում է նաև այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղը համարվում է ժողովրդավարական պետություն, որտեղ պարբերաբար անցկացվում են ազատ ընտրություններ: Ադրբեջանն, իր հերթին համարվում է ավտորիտար պետություն, որը դեմոկրատական ազատությունների գնահատման տարբեր սանդղակներում գտնվում է Սաուդյան Արաբիայի կամ Իրանի հետ նույն աստիճանին[1]:

Հատկանշական է, որ հետապրիլյան քաղաքական զարգացումներում առավել իրատեսական համարվեց Արցախի միջազգային ճանաչումը ոչ թե ՀՀ, այլ եվրոպական ընտանիքի կողմից: Այն ընդգծվեց Եվրախորհրդարանի չեխ պատգամավոր Յարոմիր Շտետինայի կողմից Արցախ այցելելու և սահմանադրական հանրաքվեի ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնելու ժամանակ տրված հարցազրույցում:Պատգամավորն ընդգծել էր՝ պատմական ճշմարտությունը Հայաստանի և Արցախի կողմն է և այդ փաստին չաջակցելը կնշանակի չընդունել Հարավային Կովկասի պատմական բաժանումը. «Ես մեկ խնդիր եմ տեսնում. Արցախն արդեն 20 տարուց ավել է, ինչ առանձին պետություն է, չնայած այն դեռ ոչ ոք չի ճանաչել, նույնիսկ Հայաստանը: Չնայած դրան՝ Արցախն ունի իր առանձին քաղաքականությունը, ժողովրդավարական համակարգը, հաջողակ տնտեսությունը: Արցախն իրավամբ առանձին պետություն է, և ես կարծում եմ, որ արդեն պետք է սկսել Արցախի ճանաչման գործընթացը: Պետք է այնպես անել, որ եվրոպական երկրները սկսեն ճանաչել Լեռնային Ղարաբաղը: Դա շատ կարևոր հանգամանք կլինի»[2]:

Հայկական պաշտոնական քաղաքական խոսույթում ԼՂՀ կողմից ևս գործուն քայլերը շարունակվեցին քննարկվող խնդրի հարցում: Հետապրիլյան քաղաքական զարգացումներում ԼՂՀ միջազգային ճանաչման գործում կարևորվել է ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանի ելույթը ԱՄՆ կոնգրեսում՝ Ղարաբաղին նվիրված լսումների ժամանակ: Վարչապետի ելույթում ընդգծվել էր ԱՄՆ 7 նահանգների կողմից ԼՂՀ ճանաչման, ԱՄՆ-ի կողմից ԼՂՀ-ին հատկացվող ամենամյա պաշտոնական ֆինանսական աջակցության, Ադրբեջանի ղեկավարության դեմ ուղղված կոնգրեսականների ելույթների, ԱՄՆ՝ որպես Մինսկի խմբի համանախագահ պետության ղարաբաղյան հիմնախնդրում դերակատարության փաստերը: ԼՂՀ վարչապետը հատկանշել էր. «ԱՄՆ միակ օտարերկրյա պետությունն է, որ միլիոնավոր դոլարների հասնող ամենամյա օգնություն է ցույց տալիս Ղարաբաղին. այդ մարդասիրական օգնության շնորհիվ բազմաթիվ կյանքեր են փրկվել, բազմաթիվ ենթակառուցվածքներ վերանորոգվել»: ԼՂՀ վարչապետը զուգահեռներ էր անցկացրել ամերիկյան և արցախյան ժողովրդավարական արժեքների միջև: Կոնգրեսականներ Ջեքի Սպիրը

---

[1] Кристоф Бенедиктер. Die Presse. Нагорный Карабах: поиск выхода, *21.04.2016* (http://old.memo.ru/d/264295.html)

[2] ԵՄ երկրները պետք է ճանաչեն Արցախը. չեխ պատգամավոր, 18.07.2016 (http://artsakhpress.am/arm/news/69849/)

և Ադամ Շիֆը հանդես էին եկել հավանություն տվող ելույթներով, իսկ կոնգրեսական Բրեդ Շերմանն ընդգծել էր Ղարաբաղի ժողովրդին հատկացվող ամերիկյան օգնության քաղաքական նշանակությանը. «Երբ ոմանք ասում են, թե արդյո՞ք Արցախի ժողովրդին ուղղակի օգնությունը չի նշանակում Լեռնային Ղարաբաղի անուղղակի ճանաչում, ես մտքումս ասում եմ, անշու՛շտ նշանակում է»: Կոնգրեսական Ֆրանկ Փալլոնը, ով բազմիցս այցելել է Լեռնային Ղարաբաղ՝ ընդգծելով Ղարաբաղի «դե-ֆակտո» գոյությունը՝ նշել էր, որ չնայած Բաքվի պնդմանը, որ Ղարաբաղն Ադրբեջանի տարածքն է, փաստացի այն անկախ է. «Ամեն անգամ Լեռնային Ղարաբաղ այցելելիս, ինձ համար ակնհայտ է դառնում, որ այն ունի անկախ պետության բոլոր պարագաները. տարածք, ժողովուրդ, իրական ժողովրդավարություն»[1]:

ԼՂՀ վարչապետի ԱՄՆ այցով պայմանավորված նկատառումներում հավանական ենք համարում.

- ԼՂՀ վարչապետի ելույթը ԱՄՆ կոնգրեսում և կոնգրեսականների ելույթների բովանդակությունը ցույց են տալիս, որ միջազգային իրավունքում «ինքնահռչակ» համարվող ԼՂՀ-ն՝ ունենալով ժողովրդավարական պետության բնութագրական հատկանիշները անուղղակիորեն ընկալվում է այդ գերտերության կողմից:
- ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետության օրենսդիր մարմնում լսումների չխոչընդոտումը խոսում է միջնորդություն ստանձնած պետության կողմից հիմնախնդրին համակողմանի տիրապետելու պատրաստակամությամբ:
- Այն հանգամանքը, որ ԱՄՆ մի շարք նահանգների կողմից ԼՂՀ ճանաչումը չխոչընդոտվեց կամ չդատապարտվեց, և նույնիսկ քաղաքական տեսանելի դաշտում արգելակող լծակներ չկիրառվեցին Սպիտակ Տան և Պետդեպարտամենտի կողմից, նշանակում է հստակ վերաբերմունք, որ ԱՄՆ կողմից ԼՂՀ ճանաչումը աշխարհաքաղաքական առումով նպաստավոր զարգացումներում անհնարին չէ:

Արցախի միջազգային ճանաչման գործում մեծ աշխատանք է կատարվում խորհրդարանական դիվանագիտության շրջանակներում: Այն Ապրիլյան պատերազմի և հետապրիլյան քաղաքական զարգացումների արդյունքում առավել մեծ թափ ստացավ: Այս առումով պետք է առանձնացնել 2016 թ. դեկտեմբերի 13-14-ին ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանի աշխատանքային այցը Փարիզ և Ֆրանսիայի Ազգային ժողովում Ֆրանսիա-Ղարաբաղ միջխորհրդարանական բարեկամության խմբի հետ ունեցած հանդիպումները[2]: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում համանախագահ երկիր Ֆրանսիայում Արցախի ճանաչելիության աստիճանի բարձրացումը կարևոր նշանակություն ունի կարգավորման գործընթացում:

Ֆրանսիա-Ղարաբաղ միջխորհրդարանական բարեկամության խմբի կողմից ԼՂՀ միջազգային ճանաչման անհրաժեշտությունն ընդգծվեց ապրիլյան պատերազմի տարելիցին: Ֆրանսիա-Արցախ բարեկամության խմբի տարածած խիստ և հասցեական հայտարարությունը դատապարտում էր հրադադարի ռեժիմի խախտման աննախադեպ մակարդակը 1994 թ. հրադադարից հետո, խաղաղ բնակչության նկատմամբ բռնության դեպքերը: Բարեկամության խմբի անդամ Ֆրանսիայի հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ֆրանսուա

[1] Ամերիկյան օգնությունը Ղարաբաղում կյանքեր է փրկում՝ ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյան 08.12.2016 (https://www.amerikayidzayn.com/a/3627279.html/):

[2] ԼՂՀ ԱԺ նախագահի աշխատանքային այցը Փարիզ, 14. 12. 2016 (http://www.nankr.am/hy/1902/)

Ռոշբլուանի խոսքերով. «Ահա թե ինչու անհրաժեշտ է պայմաններ ստեղծել Արցախի հանրապետության միջազգային ճանաչման և բանակցությունների սեղան վերադարձնելու համար, այլ ոչ թե կիրառել հիպոթետիկ կամ տեսական միջոցներ, որոնք ուղղված են տարածաշրջանում երկարատև խաղաղության հաստատմանը»[1]: Փաստորեն, Ֆրանսիայի /ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկիր/ քաղաքական շրջանակներում հեղինակություն վայելող պատգամավորի կարծիքն այս հարցում էականորեն տարբերվում էր Մինսկի խմբի հաստատված ձևաչափից և թույլ է տալիս դատել, որ այլընտրանքային ուղիներ ստեղծված իրավիճակից, այնուամենայնիվ, քննարկվում են:

Փաստորեն, Ապրիլյան պատերազմը և հետապրիլյան քաղաքական զարգացումները նոր թափ հաղորդեցին Արցախի Հանրապետության ճանաչման գործընթացին:Հանրապետության նախագահի, Արտաքին գործերի նախարարության կողմից պետականության ճանաչմանն ուղղված գործընթացը նոր ուղղվածություն և ընթացք ստացան:

Հատկանշական է, որ Ադրբեջանը ձեռնպահ չմնաց Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման մասին հրապարակային ելույթներից կամ ՀՀ-ում ծավալված գործընթացներից, մանավանդ որ ապրիլյան և հետապրիլյան քաղաքական խոսույթում Արցախի նկատմամբ համակրանքի ակնհայտ դրսևորումներ եղան վերոնշյալ մակարդակներում: Դա այն դեպքում, երբ Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին հայտարարություններով հանդես էին եկել միայն Թուրքիան և Պակիստանը:

Ապրիլյան պատերազմի և հետապրիլյան պաշտոնական խոսույթի ադրբեջանական դաշտն առանձնացավ խուճապային շեշտադրումներով, մասնավորապես գերակա էին հետևյալ փաստարկները.

- Հայաստանը կարող է ճանաչել Ղարաբաղի անկախությունը. հայկական քաղաքական վերնախավի կողմից՝ ամեն տարի տարբեր քաղաքական կուսակցություններ արդիականացնում են Ղարաբաղի օկուպացիոն ռեժիմի ճանաչման հարցը և նույնիսկ այն դարձնում են կառավարության և խորհրդարանի վերանայման խնդիր:
- Հայաստանի ղեկավարությունը հասկանում է, որ Ղարաբաղի ճանաչումը նշանակում է բանակցությունների վերջ: Պաշտոնական Բաքուն երբևէ բանակցություններ չի վարի Ղարաբաղի անկախությունը ճանաչած Հայաստանի հետ, ինչն ուղի է դեպի պատերազմ:
- Ղարաբաղի ճանաչման դեպքում Հայաստանը կկորցնի միջազգային հանրության, այդ թվում և Ռուսաստանի աջակցությունը: Ադրբեջանն այդ հարցը կբարձրացնի ՄԱԿ-ում, որտեղ կառաջնահերթվի Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարցը:
- Ղարաբաղը Հայաստանի համար քաղաքական բեռ է, որը լճացնում է նրա քաղաքական և տնտեսական զարգացումը:
- Ղարաբաղի միջազգային ճանաչման դեպքում համաշխարհային նախադեպերը չեն կարող գործել, քանի որ դա Ադրբեջանի տարածքային ամբողջականության խախտում կլինի, ինչն էլ հակասում է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքին:

Հատկանշական է, որ ադրբեջանական կողմի մտավախությունները, որոշակի փարատվեցին ՌԴ ԱԳՆ նախարար Լավրովի ելույթից հետո: 2016 թ.

[1] La reconnaissance internationale de l'Artsakh conditionne la paix au Sud Caucasehttp://www.france-artsakh.fr/2017/04/13/la-reconnaissance-internationale-de-lartsakh-conditionne-la-paix-au-sud-caucase/ 13 AVRIL 2017 PAR

մայիսի 4-ին ՌԴ արտաքին գերատեսչության ղեկավարի «Россия сегодня»-ին տված հարցազրույցում այս մասին ասվել էր հետևյալը. Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի ճանաչմանը, ապա չէ՞ որ դա Հայաստանը չի առաջարկում, այլ խորհրդարանի երկու անդամներ: Հայաստանի կառավարությունը օրենքով, ինչպես իրենք բոլորին բացատրել են, հանգստացնելով կրքերը, պետք է այդ օրինագծի եզրակացությունը պատրաստի: Այժմ խուճապ և անհանգստություն չեմ տարածի: Երբ ես Երևանում էի, հեռախոսով շփվել եմ իմ գործընկեր արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանի հետ, իսկ Մոսկվայում արդեն ապրիլի սկզբի դեպքերից հետո, ինձ հստակ հաստատել են Երևանի հակվածությունը խաղաղ կարգավորմանը: Դա նշանակում է, որ Ղարաբաղի կարգավիճակը պետք է որոշվի ընդհանուր պայմանավորվածության համատեքստում, այլ ոչ թե միակողմանի կարգով[1]:

Փաստորեն՝ Ս. Լավրովի ելույթը բխում էր հիմնախնդրի շուրջ ծավալված իրողությունների ընդհանուր տրամաբանությունից, Ռուսաստանի՝ որպես Մինսկի խմբի համանախագահ երկրի դերակատարությունից, հիմնախնդրի նկատմամբ ձևավորված արմատական մոտեցումներից՝ ուստի այն կարելի է համարել ՀՀ և ԼՂՀ քաղաքական էլիտաներին ուղղված հստակ մեսիջ:

Ադրբեջանցի հոդվածագրի խոսքերով. «Ռուս դիվանագետն ուղղակիորեն հետ է պահում Երևանին չմտածված գործողություններից՝ նրանց պատասխանատվության կանչելով: Քանի որ իրավիճակն ամեն վայրկյան կարող է դուրս գալ վերահսկողությունից և Ադրբեջանին մղել սեփական ուժերով ճգնաժամը լուծելու: Լավրովն այդ մասին բացահայտ չի խոսում, բայց ակնարկում է»[2]: Ադրբեջանի պաշտոնական կայքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ասելու, որ Ապրիլյան պատերազմի և հետապրիլյան քաղաքական զարգացումներում աննախադեպ մտավախություն կար ԼՂՀ միջազգային ճանաչման գործընթացի ծավալման առումով, և, թերևս, սա լայնածավալ գործողություններ հրահրող հիմնական դերակատարի համար զսպող գործոն հանդիսացավ: ԼՂՀ միջազգային ճանաչման մասին խոսույթը աննախադեպ դրսևորում ունեցավ նաև Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի պաշտոնական շփումների ընթացքում: Մասնավորապես՝ Իլհամ Ալիևը 2016 թ. հոկտեմբերին նախարարների խորհրդի նիստի ընթացքում այսպիսի միտք էր հնչեցրել. «Մեզ վրա ճնշում է գործադրվում Լեռնային Ղարաբաղի ճանաչման նպատակով: Մենք շատ մանրամասներ չենք բացում, քանի որ կան դիվանագիտական կանոններ: Բայց Արևմուտքի՝ Ադրբեջանին սևացնելու արշավը տարբեր ոչ կառավարական կազմակերպությունների , ինչպես նաև, երկրի ներսում «5-րդ շարասյան» միջոցով նպատակ ունեն համաձայնություն ստանալու Լեռնային Ղարաբաղի անկախության հարցում: Ադրբեջանը չի գնա դրան»: Չնայած իր խոսքում Իլհամ Ալիևը անուղղակիորեն մատնանշում էր Արևմուտքի ճնշման փաստը, այնուամենայնիվ, խնդիրը չգաղտնազերծված դիվանագիտության հարթակում է, հետևաբար, ենթադրության մակարդակում հնարավոր ենք համարում

[1] Из интервью Министра иностранных дел России С.В.Лаврова МИА «Россия сегодня», Москва,4.05.2016(http://www.mid.ru/web/guest/meropriyatiya_s_uchastiem_ministra//asset_publisher/xK1BhB2bUjd3/content/id/2267661)

[2] Мамедов Ф., Азербайджан: «Признание Карабаха – путь к войне», 7.05.2016 (https://regnum.ru/news/polit/2129431.html/)

Ադրբեջանին որոշակի քաղաքական կամ տնտեսական պարտադրումներ անելու նպատակով ճանաչման հարցը որպես ճնշման միջոց օգտագործելը[1]:

Երկրորդ անգամ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը այս մասին հայտարարել էր, Ալ-Ջազիրա հեռուստաընկերությանը տված իր հարցազրույցում. «Ադրբեջանը երբեք չի համաձայնի ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը: Աշխարհի ոչ մի երկիր, այդ թվում և Ադրբեջանի նկատմամբ ցեղասպանություն իրականացրած Հայաստանը չի ճանաչի Լեռնային Ղարաբաղը որպես անկախ պետություն»[2]:

Փաստորեն, պաշտոնական Բաքուն շարունակում է չընդունել ԼՂՀ առաջնային միջազգային սուբյեկտ լինելը: Ադրբեջանական կողմի զիջումը շարունակում է լինել Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ Հայաստանի հետ խորհրդատվությունները շարունակելու համաձայնությունը[3]:

Իրականում Արցախի Հանրապետությունում ծավալվող քաղաքական գործընթացներն, այս դեպքում այլ բան են փաստում. 2017 թ. փետրվարի 20-ին կայացած Սահմանադրական հանրաքվեին իրենց մասնակցությունն են ունեցել աշխարհի 30-ից ավելի երկրների 104 միջազգային դիտորդներ, այդ թվում և Մինսկի խմբի համանախագահ պետությունների ներկայացուցիչներ: «Դե-յուրե» ճանաչում չունեցող պետության նկատմամբ մոտեցման նման դրսևորումը խոսում է ժողովրդավարական Արցախի և նրա նկատմամբ միջազգային մեծ հետաքրքրության մասին:

- Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը ինքնանպատակ չէ, խնդրում գերակա է անվտանգության ապահովման բաղադրիչը՝ ճանաչման դեպքում դրա ամրագրումը միջազգային մակարդակի երաշխիքներով: Հատկանշական է, որ Արցախի կենսունակության ցուցիչն առանց արտաքին ուժերի օգնության սեփական ժողովրդի անվտանգության կազմակերպումն է, ինչը, թերևս, ամենագլխավոր պայմանն է պետության բնութագրական հատկանիշներում :
- Արցախի Հանրապետությունում գերակա է այն սկզբունքը, որ որևէ պետության իրավաբանական գոյությունը կախված է ոչ թե այլ պետությունների կողմից նրա գոյության ճանաչումից, այլ միջազգային իրավունքով սահմանված պետությունը բնութագրող հատկանիշների ամրագրումից: Արցախի Հանրապետությունն առայժմ օգտագործում է միջազգային իրավունքի ըստ պահանջի սկզբունքը՝ այլ երկրների հետ հարաբերություններ կառուցելու նպատակով, ինչը թելադրված է առկա կարգավիճակով:
- ՀՀ կողմից Արցախի Հանրապետության ճանաչման գործընթացի հետաձգումը քաղաքական-դիվանագիտական զսպման մեխանիզմ է, ինչը կարող է իրականացվել «սողացող հակամարտության» կողմերից մեկի՝ Արցախի Հանրապետության անվտանգությանն ուղղված սպառնալիքի դեպքում: Պայմանավորված ռազմաքաղաքական իրողություններով՝ ՀՀ և ԱՀ արտաքին քաղաքական առաջնահերթություններից են միջազգային ճանաչման գործընթացի ծավալումն՝ ինչն իրականացվում է աշխարհաքաղաքական իրողությունների և դիրքափոխությունների գնահատմամբ:

---

[1] Гасанов В., Алиев: Азербайджан не согласится на независимость Нагорного Карабаха, 7.10.2016 (/https://ria.ru/world/20161007/1478745442.html)

[2] Ильхам Алиев: “Азербайджан никогда не согласится на независимость Нагорного Карабаха”17 02. 2017 (http://www.infoaz.org/new/index.php/ru/manset-rus/48963-bgfdgf/)

[3] Քոթանջյան Հ., Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Երևան, 2009, էջ 122-123:

- Ապրիլյան և հետապրիլյան ռազմաքաղաքական զարգացումներում Ադրբեջանը դիվանագիտական պարտություն կրեց. աննախադեպ քաղաքական խոսույթ ծավալվեց Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման շուրջ:
- Հատկանշական է, որ քաղաքական խոսույթում հստակ ընդգծվեց Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման անհրաժեշտությունը առավելապես եվրոպական պետությունների կողմից:
- Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը որպես զսպման մեխանիզմ համակարգել է արտաքին քաղաքական, ներքաղաքական, ռազմաքաղաքական գործառույթներ:

Նելլի Բաղդասարյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԽՈՍՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԶՍՊՄԱՆ ԼԾԱԿ ԱՊՐԻԼՅԱՆ ԵՎ ՀԵՏԱՊՐԻԼՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *Հայաստանի Հանրապետություն/ՀՀ/, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն/ԼՂՀ/, Արցախի Հանրապետություն/ԱՀ/, Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչում, Ապրիլյան պատերազմ, զսպման մեխանիզմ, Եվրախորհրդարան*

Հոդվածում լուսաբանվել են Ապրիլյան պատերազմով պայմանավորված Արցախի Հանրապետության ճանաչման փաստին առնչվող խնդիրներ: Ճանաչման հարցը դիտարկվել է որպես զսպման մեխանիզմ հակամարտության լարվածության կանխման գործում: Դիտարկվել են ՀՀ կողմից ԱՀ ճանաչման խոսույթը, Ապրիլյան պատերազմի միջազգային արձագանքներում ԱՀ ճանաչման կարևորությունը տարածաշրջանային կայունության հարցում, ճանաչման գործընթացի շուրջ ծավալված ադրբեջանական քաղաքական դաշտի մոտեցումները: Լեռնային Ղարաբաղի միջազգային ճանաչումը ինքնանպատակ չէ, խնդրում գերակա է անվտանգության ապահովման բաղադրիչը՝ ճանաչման դեպքում ամրագրումը միջազգային մակարդակի անվտանգության երաշխիքների ամրագրումը: Փաստորեն՝ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը որպես զսպման մեխանիզմ համակարգել է արտաքին քաղաքական, ներքաղաքական, ռազմաքաղաքական գործառույթներ:

Нелли Багдасарян

ДИСКУРС ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КАЧЕСТВЕ РЫЧАГА СДЕРЖИВАНИЯ В АПРЕЛЬСКИХ И ПОСЛЕАПРЕЛЬСКИХ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИХ РАЗВИТИЯХ

Ключевые слова: *Республика Армения/РА/, Нагорно-Карабахская Республика/НКР/, Республика Арцах/РА/, международное признание Нагорного Карабаха, Апрельская война, механизм сдерживания, Европейский парламент*

В данной статье раскрываются обусловленные Апрельской войной проблемы признания статуса Республики Арцах. В качестве приоритета выступает компонент обеспечения безопасности. Вопрос признания рассматривается как механизм сдерживания, основывающий предотвращение эскалации конфликта. Статья затрагивает дискурс признания Республики Арцах со стороны Республики Армения, акцентируется внимание на вопрос признания Республики Арцах с точки зрения региональной стабильности и отклик международного сообщества, выделяются и описываются особенности выработки подходов политического поля в Азербайджане вокруг международного процесса признания Арцаха. Обосновывается идея о том, что международное признание Республики Арцах не является самоцелью, а в качестве приоритетного направления выделяется обеспечение безопасности и его закрепление в случае признания установленными на международном уровне гарантиями. Фактически внешнеполитические, внутриполитические, а также военно-политические процессы скоординированы международным признанием Республики Арцах в качестве механизма сдерживания.

Nelly Baghdasayan

THE DISCOURSE OF THE ARTSAKH REPUBLIC RECOGNITION AS A LEVER OF CONFLICT DETERRENCE IN THE APRIL AND POST-APRIL MILITARY-POLITICAL DEVELOPMENTS

Key words: *Republic of Armenia /RA/, Nagorno Karabakh Republic /NKR/, Artsakh Republic/AR/, international recognition of Nagorno Karabakh, April war, deterrence lever, European Parliament*

The article under consideration covers issues pertaining to the fact of Artsakh Republic recognition conditioned by the April war. While dealing with the issue the security component is prioritized, while recognition is regarded as a deterrence lever to prevent conflict escalation.The article addresses the discourse of recognizing the Artsakh Republic by the Republic of Armenia, the significance of the Artsakh Republic recognition in the international response to the April war with respect to regional stability and policies adopted by the Azerbaijani political realm around the recognition process.Conclusions are drawn that the international recognition of Nagorno Karabakh is not an end in itself; the security component is a priority in the issue backed by international level guarantees upon recognition. In fact, the NKR international recognition as a deterrence lever has coordinated both foreign and domestic policy, as well as military-political processes.